

# ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2015թ. նոյեմբերի 26-ի

նիստի /արձ.5/

1. Հաշվի առնելով 2014-2015 ուս. տարվա ընթացքում կատարած գիտահետազոտական և ուսումնական աշխատանքների կատարման արդյունքները՝

1.1 ԺԷ.00.01. «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտության հեռակա ուսուցման ասպիրանտ Սերգեյ Լևոնի Սանոյանին ատեստավորել և փոխադրել ուսումնառության III կուրս:

1.2 ԺԷ.00.01. «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտության հեռակա ուսուցման ասպիրանտ Արթուր Տիգրանի Վարդիկյանին ատեստավորել և փոխադրել ուսումնառության II կուրս:

2. Հաստատել և գործողության մեջ դնել՝

2.1 ԵԹԿՊԻ-ի կադրերի բաժնի կանոնակարգը

2.2 ԵԹԿՊԻ-ի հաշվապահության կանոնակարգը:

3. Հաստատել և գործողության մեջ դնել՝

3.1 ԵԹԿՊԻ միջազգային կապերի և շարունակական կրթության բաժնի կանոնակարգը,

3.2 ԵԹԿՊԻ-ում դասախոսների վերապատրաստման և մասնագիտական զարգացման

ծրագրի կազմակերպման կանոնակարգը՝ ներառելով քննարկման ընթացքում արված առաջարկները:

4. Կարևորելով Սամվել Էվոյանի «Օվի Սևույան. հայ բեմադրական արվեստի նորարարը» գրքում զետեղված հարուստ փաստագրական նյութի առկայությունը և Արվեստի պատմության, տեսության ամբիոնի նիստի եզրակացությունը՝

4.1 Սամվել Էվոյանի «Օվի Սևույան. հայ բեմադրական արվեստի նորարարը» վերնագրով գիրքը երաշխավորել տպագրության,

4.2 հանձնարարել Սամվել Էվոյանին՝ գրքի հրատարակման ծախսերի 50%-ի համար գտնել հովանավոր:

5. Արձանագրել, որ դոցենտի գիտական կոչումներ շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

5.1 հաստատել դոցենտի գիտական կոչումներ շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները,

5.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի դ) ենթակետի համաձայն ձայների մեծամասնությամբ (28 կողմ, 2 դեմ) Սիրանուշ Երեմի Ղուկասյանին շնորհել դոցենտի գիտական կոչում ԺԷ.00.01. «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՂ-ին հաստատել գիտական խորհրդի որոշումը,

5.3 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի դ) ենթակետի համաձայն Լարիսա Վարազդատի Ստեփանյանին միաձայն շնորհել դոցենտի գիտական կոչում ԺԷ.00.01. «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՂ-ին հաստատել գիտական խորհրդի որոշումը:

6. 2016թ. հունվարի 1-ից`

6.1 ԵԹԿՊԻ-ի ներքոհիշյալ կառուցվածքային ստորաբաժանումները և հաստիքները վերանվանել համաձայն աղյուսակ 1-ի

աղյուսակ 1

ստորաբաժանման / հաստիքի նախկին անվանումը	ստորաբաժանման / հաստիքի նոր անվանումը
Ընդհանուր հարցերով և ֆինանսատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ֆինանսատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր
Միջբուհական, միջազգային համագործակցության և բարեփոխումների գծով պրոռեկտոր	Անձնակազմի կառավարման, միջազգային համագործակցության և միջբուհական գծով պրոռեկտոր
Ուսումնական մաս	Ուսումնական գործընթացի համակարգման բաժին

Ուսումնական մասի վարիչ	Ուսումնական գործընթացի համակարգման բաժնի պետ
Կադրերի բաժին	Անձնակազմի հաշվառման բաժին
Կադրերի բաժնի պետ	Անձնակազմի հաշվառման բաժնի պետ
Ուսումնաարտադրական բազա	Ուսումնաարտադրական և տեխնիկական մաս (մասի համակարգող)
Ստուկ-փրոդակշն	Ստուկ-փրոդակշնի համակարգող
Իրավախորհրդատու	Ռեկտորի իրավախորհրդատու (ռեկտորի ենթակայության ներքո)

6.2 Ինստիտուտի կառուցվածքը համալրել ներքոհիշյալ բաժիններով՝

6.2.1. Գնումների համակարգման խումբ - (ֆինանսատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորի ենթակայության ներքո, խմբի պատասխանատու),

6.2.2. Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն (անձնակազմի կառավարման, միջազգային համագործակցության և միջբուհական գծով պրոռեկտորի ենթակայության ներքո, կենտրոնի համակարգող),

6.2.3. Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոն (անձնակազմի կառավարման, միջազգային համագործակցության և միջբուհական գծով պրոռեկտորի ենթակայության ներքո, կենտրոնի ղեկավար),

6.2.4. Կարիերայի և պրակտիկայի կենտրոն (ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի ենթակայության ներքո, կենտրոնի ղեկավար):

6.3 Ինստիտուտի հաստիքացուցակում ավելացնել «Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի մասնագետի» հաստիքը:

7. ԵԹԿՊԻ-ի Խորհրդի կազմում ընդգրկելու համար առաջադրել ներքոհիշյալ դասախոսների թեկնածությունները՝

1. Սարգսյան Նարինե Մելրանի – ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր

2. Ավագյան Հովհաննես Մկրտիչի – միջբուհական, միջազգային համագործակցության և բարեփոխումների գծով պրոռեկտոր, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. Մուրադյան Լատրա Գուրգենի - Հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
4. Հովհաննիսյան Հենրիկ Վահանի - արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
5. Գասպարյան Հրայրա Վահագնի – ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր,
6. Գալստյան Վիլեն Շմավոնի – ՀՄՄՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր
8. 2016թ. հունվարի 1-ից ԵԹԿՊԻ-ում պրոֆեսորի և դոցենտի տարակարգերի համար սահմանել ծանրաբեռնվածության 1 ժամի արժեքի ներքոհիշյալ սակագները հետևյալ տարբերակմամբ՝
  - 8.1 պրոֆեսորի տարակարգում՝  
պրոֆեսորի գիտական կոչում ունեցող դասախոսների համար ծանրաբեռնվածության 1 ժամի արժեքը սահմանել 2000 դրամ,
  - 8.2 դոցենտի տարակարգում՝  
դոցենտի գիտական կոչում ունեցող դասախոսների համար ծանրաբեռնվածության 1 ժամի արժեքը սահմանել 1800 դրամ,
  - 8.3 պրոֆեսորի և դոցենտի տարակարգեր զբաղեցնող և համապատասխան գիտական կոչում չունեցող դասախոսների համար ծանրաբեռնվածության 1 ժամի արժեքը թողնել անփոփոխ:
9. Հանձնարարել ինստիտուտի բոլոր ստորաբաժանումներին մինչև ս.թ. դեկտեմբերի 20-ը ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորին (էլեկտրոնային տարբերակով) ներկայացնել հաշվետվություն տարվա ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:
  - 9.1. Հաստատել ռեկտորատի ս.թ. նոյեմբերի 25-ի որոշումը և 70-ամյա հոբելյանի կապակցությամբ ինստիտուտի շրջանավարտ ՀՀ կինոֆոտոգրաֆիստների միության նախագահ Ռուբեն Գևորգյանցին պարգևատրել ինստիտուտի հուշամեդալով:
  - 9.2 Ի կատարումն ՀՀ ԿԳՆ ներքին առաջնության գործողությունների ծրագրի 15-րդ կետի պահանջի 2016-2017 ուս. տարվանից հնարավորինս բացառել հիմնական աշխատավայրի և համատեղության վայրի օրական աշխատաժամանակը 12 ժամը գերազանցելու դեպքերը: